օրագրողների թողած պատմագրական ժառանգության ամենահիմնական առանձնահատկությունը, համեմատած նախորդ, վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանների պատմագրության հետ, այն է, որ նրանում իր լայն անդրադարձումն է գտել ժողովրդի պատմությունը, նրա կյանքը, կրած արհավիրքներն ու սարսափները, բռնագաղթերը, պանդխտությունը, նիստ ու կացը, ավանդություններն ու սովորությունները, ֆիզիկական գոյության պահպանման համար անասելի մաքառումները, կրած տնտեսական, կրոնական ու ազգային հալածանքները...»,– գրում է Լևոն Բաբայանը (ընդգծումը բնագրում–Ա.Ն.)[18]: Նույն գիտնականը Դավրիժեցու պատմագրքի բովանդակային ընդգրկումների առումով կատարում է մեկ այլ հետաքրքիր դիտարկում ևս: Զուգադրելով Գրիգոր Դարանաղցու և Առաքել Դավրիժեցու պատմագրքերը, նա գրում է. «...ստացվում է այն տպավորությունը, որ կարծեք նրանց միջև ինչ-որ ներքին պայմանավորվածություն է գոյություն ունեցել: Այն քաղաքական, հոգևոր ու մշակութային կարևոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Արևելյան Հայաստանում, Դարանաղցին անցողակի է նշում... Նույն ձևով վարվել է և Դավրիժեցին, նա էլ արևմտահայության կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին անդրադարձել է հպանցիկ»[19]:

Ահա բովանդակային այս յուրահատկություններն էլ պայմանավորել են պատմագրքի համապատասխան կառույց: «Գիրք պատմութեանց»-ը, ըստ գիտաքննական բնագրում առկա վերջնական տվյալների, բաղկացած է ԾԸ (58) գլուխներից, որոնք ընդհուպ Լ գլուխը զարգանում են ժամանակագրական կանոնավոր հաջորդականությամբ: Նույնիսկ հարևան վրաց ժողովրդի

---

18 ***Լևոն Բաբայան,*** Դրվագներ Հայաստանի XIV–XVII դարերի պատմագրության, էջ 18:

19 Նույն տեղում, էջ 57–58: